«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 15.06.2017թ.ժամը 17.00

Համաձայն,26.05.2017թ-ին քաղաքացի Վարուժան Մարգարյանից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 35 Բողոք-գրությունը քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի թիվ ԵԱԴԴ 0096/04/14, սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ախոյանի գործողությունների /անգործության/ փաստի նկատմամբ,վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ս/թ-ի Հունիսի 15-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանը
Դիմումատու՝Վարուժան Մարգարյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ Վարուժան Մարգարյանը և լիազորված ներկայացուցիչ՝Նաիրա Ասատրյանը:
Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
Քաղաքացի Վարուժան Մարգարյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 26.05.2017թ-ին ստացված թիվ Մ35 բողոքի հիմքով քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչների վարքագծերի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց,26.05.2017թ-ին,քաղաքացի Վարուժան Մարգարյանից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ Մ35 դիմում-բողոքը և քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանից նախորոք ստացված փաստաթղթերը առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանի վարքագծի /անգործության/ վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի նախահն նշեց որ ներկայացված դիմում-բողոքը իր մեջ պարունակում է կոնկրետ անգործության մասին տեղեկատվություն սնանկության գործով կառավարչի կողմից, որի պատճառների և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ պարզաբանումներ կարող են ստանալ կարգապահական վարույթի շրջանակներում:

Վերոգրյալի հիմքով հանձնաժողովի նախագահն,առաջարկեց հարուցել կարգապահական վարույթ,որի ընթացքում էլ կարող է պարզվել կառավարչի մեղավորության կամ անմեղության հարցը:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – Քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանի նկատմամբ՝քաղաքացի Վարուժան Մարգարյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 26.05.2017թ-ին ստացված թիվ Մ35 դիմում-բողոքում առծածված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովում նախագահող՝Տիգրան Հարությունյանին,ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել բողոքաբեր - պարտատիրոջը

2.Լսել սնանկության գործով կառավարչին

2.Ուսումնասիրել ներկայացվող փաստաթղթերը

Հանձնաժողովի անդամները,բողոքաբերը իր ներկայացուցիչը և սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին:

Համաձայն աշխատանքային կարգի Հանձնաժողովի Նախագահը ձայնի իրավունք տվեց՝ բողոքաբեր - պարտատեր՝Վարուժան Մարգարյանին,նշելով որ բողոքաբերը իր ելույթում շեշտադրումը դնի սնանկության գործով կառավարչի գործողությունների կամ անգործության վրա:

Դիմումատուն նշեց որ իր դիմում-բողոքը ուղղված է կառավարչի գործողությունների պասիվությանը և այն գործողություններին,որոնց արդյունքում սնանկության գործը միայն երկարաձգվում է,մասնավորապես կառավարչի 22.05.2015թ-ին դատարան ներկայված միջնորդությունը, ք.Երևան,Դավթաշեն 1-ին թաղ.38շ.15 բն-ը հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու վերաբերյալ, մերժվում է դատարանի կողմից,հաջորդ գործողությունը,որ կառավարիչը կատարում է 09.09.2016թ-ին դատարան է ներկայացնում վերոգրյալ բնակարանի,պարտապանի սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը առանձնացնելու կամ բնակարանը հրապարակային սակարկություններով իրացնելու մասին,որպիսի դատական գործը շարունակվում է մինչ օրս և հաջորդ դատական նիստը նշանակված է՝13.09.2017թ-ին:

Պարտատիրոջ կարծիքով սնանկության գործով կառավարիչի նմանատիպ գործողությունները ուղղված են ժամանակի ձգմանը,որը կառավաչին տալիս է իր աշխատավարձի հաշվարկման ամենամսյա հնարավորություն,որը ի հակառակ իրենց իջեցնում է իրենց գումար ստանալու հնարավորությունները,իսկ ժամանակի ձգումը կառավարչի կողմից ակներև է,ու իր կարծիքով բխում է կառավարչի սնանկության ընթացակարգերին չտիրապետելուց և դրանք անարդյունավետ իրականացնելուց:

Բողոքաբերի ներկայացուցիչը նույնպես ելույթ ունեցավ և նշեց որ իրենք շատ դժգոհ են սնանկության գործով կառավարչի աշխատելաոճից և նրա դանդաղկոտությունից,որ 26.12.2014թ ից մինչ օրս շուրջ 2.5 տարի կառավարչի կողմից,ոչ մի էական քայլ չի կատարվել պահանջների բավարարման ուղղությամբ,չնայած այն փաստին,որ իրենց հայցով արդեն կա ուժի մեջ մտած վճիռ՝վերոնշյալ բնակարանի բաժնեմասի առանձնացման անհնարինության և բնակարանի հրապարակային սակարկություններով իրացնելու մասին,որի մասին հայտնվել է սնանկության գործով կառավարչին,բացի դրանից երբ իրենք կառավարչից պահանջում են իր կատարած գործողությունների մասի,որևե տեղեկատվություն ներկայացնել,կառավարիչը հայտնում է,որ բոլոր գործողությունների մասին դուք տեղեկացված և ծանուցված էք,բայց իրենք ոչ մի անգամ ծանուցումներ կամ նամակներ չեն ստացել,որը և մի պատճառ է բողոքելու և պահանջելու համար

Ներկայացուցիչը պնդեց դիմումով պահանջը սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ախոյանին հեռացնել,քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարչի պաշտոնից և նշանակել այլ կառավարիչ:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը ձայն վերցնելով հարց ուղղեց դիմումատուին,այն մասին,արդյոք կառավարիչը երբևե գրավոր կամ բանավոր հայտնել է իր աշխատավարձի չափի կամ ձևի մասին:

Դիմումատուի ներկայա՝ Նաիրա Ասատրյանը հայտնեց որ կառավարչի կողմից մի քանի անգամ բանավոր ասվել է,որ ամսեկան աշխատավարձը կազմում է՝15 000 ՀՀ դրամ,որը այսքան ամիսների համար արդեն հաշվարկվել է և դեռ հաշվարկվելու է:

Պարզաբանումների համար ձայնի իրավունք տրվեց սնանկության գործով կառավարիչ՝ Կ.Ախոյանին,ով իր ելույթը սկսեց հետևյալից՝

1.բողոքաբեր ՝Վարուժան Մարգարյանը հանդիսանում է քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով,հաստատված պահանջով,պարտատեր,ում ներկայացուցիչն է հանդիսանում՝փաստաբան Ղևոնդ Վաղարշակի Պապոյանը՝ք.Չարենցավան,6-րդ թաղ.21շ.5բն.,որի հասցեյով էլ կատարվում են բոլոր ծանուցումները և օրենքով սահմանված գործողությունների մասին տեղեկատվությունը/ներկայացնելով ծանուցումներ և միջնորդություններ ու դրանց փոստային ծառայության միջոցով վերոգրյալ հասցեյով պարտատիրոջ ներկայացուցչին պատշաճ ուղարկման,անդորագրերը/:

Կառավարիչը հայտնեց նաև որ պարտատերերը իրենց ներկայացուցչի միջոցով տեղեկացել և մասնակցել են,օրինակ պարտապանի գույքի գույքագրմանը,պարտատերերի առաջին ժողովին, որի ընթացքում էլ հաստավել է կառավարչի ընթացիկ վարչական ծախսերի համար, նախահաշվով ներկայացված,վարչական ծախսերի չափը՝ամսեկան 15000 ՀՀ դրամի չափով,որին պարտատերը կողմի է քվեարկել,որը և սխալմամբ ընկալվել է պարտատիրոջ կողմից,որպես ամսեկան հաշվարկվող աշխատավարձ:Վերոնշյալ վարչական ծախսերից մինչ օրս ոչ մի լումա չի փոխհատուցվել,չնայած այն փաստի որ կառավարչի կողմից կազմակերպվել և իրականացվել է՝պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի գույքագրում,այդ գույքի շակայական արժեքի գնահատում,մինչ օրս կատարվում է անշարժ գույքի պահպանություն, գույքի բաժնեմասի բաժանելիության կամ չբաժանելիության վերաբերյալ փորձաքննություն, դատական հայցերի կամ դիմումների կազմում և դատարան ներկայացում,դատական նիստերի հաճախում և իրավաբանական հարցումների կատարումը,այդ բոլոր ծախսերը կատարվել և կատարվում են կառավարչի կողմից և ինչպես նշվեց մինչ օրս վարույթում ոչ մի լումա չի փոխհատուցվել:

2.Կառավարիչը նշեց,որ կատարվող ծախսերի նշումներով արդեն նշվեց,սնանկության վարույ - թում կատարված գործողությունները,որոնք բոլորն էլ ուղղված են,պահանջների շուտափույթ բավարարմանը,բացի դրանից ինքը նույնպես շատ է ցանկանում,որպեսզի վարույթում առաջանան դրամական միջոցներ,քանի որ ,ինչպես «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 30-րդ հոդված 2-րդ մասով է սահմանված,կառավարչի վարձատրությունը կազմում է բավարարված պահանջի որոշակի տոկոսը,այսինքն իր վարձատրությունը և պահանջների բավարարումն կապված են իրար հետ և իր կողմից,ինչպես պարտատերն է նշել՝**«արհեստական ձգձգումները»** վնաս են նաև անձամբ իրեն,որը և անտրամաբանական է:Կառավավարիչը նշեց,որ այն ընթացակարգերը/ գույքի հայտնաբերում,գույքագրում,գնահատում,իրացման ներկայացում/ որոնք պետք է կատարվեին կառավարչիկողմից կատարվել են շատ արագ և օրենքով սահմանված ժամկետներում,իսկ այժ սնանկության վարույթում կատարվում են գործողություններ,որոնք կապված են դատական պռոցեսների հետ,իսկ դատարաններում դատական ընթացակարգերի ժամկետային նշանակումները կառավարչից անկախ են և կատարվում են դատավորների կողմից,որը պարտատիրոջ կարծիքով ժամկետների ձգձգում է,բայց որևե կերպ սնանկության գործով կառավարչի կողմից կատարվող կամ վերահսկման ենթակա չէն:

Նշված գոր

ապահական հանձնաժողովին և ինք լավ հասկանում է հանձնաժողովի իրավասությունները,բայց ստանալով ծանուցումը նիստի կայացման վերաբերյալ գտել է ճիշտ ներկա գտնվել է տալ համապատասխան պարզաբանումներ:Դիմումատուն փորձեց

առանձնացրել իր 12 թերթանոց դիմումից սնանկության գործով կառավարչին վերաբերվող մասերը և ընդհանուր առմամբ ներկայացրեց իր դժգոհությունը այն մասին,որ կառավարիչը իրացրել է իր անշարժ գույքերը շատ էժան և ինքը մի բան էլ պարտք է մնացել բանկին,որը և իրացման պրոցեսները իրեն շատ կասկածելի են թվում,այդ թվում նաև իրացման գումարի վճարման պրոցեսը և վճարման կարգը:

Ելույթի համար ձայն վերցրեց հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը և մասնավորապես նշեց,որ ուսումնասիրելով բողոքը,լսելով կողմերին և վերլուծելով ներկայացված փաստերը, գալիս ես այն եզրակացության որ բողոքաբերը լավ ծանոթ չէ «Սնանկության մասին»ՀՀ օրենքին մասնավորապես 30-րդ հոդվածին,որտեղ օրենսդիրը նկատի ունենալով կառավարչի կողմից անհարկի կամ արհեստական ձգձգումների հնարավորությունը,կարգավորել է խնդիրը,կառավարչի վարձատրությունը ուղղակիորեն կապելով,պահանջի բավարարման հետ, այսինքն սնանկության գործով կառավարիչը չստանալով ամսեկան վարձատրություն,իր վարձատրությունը կարող է ստանալ միայն պարտատիրոջ պահանջի բավարման հետ միասին, նույն բաշխման ծրագրով,որը ըստ օրենքի մտքի ստեղծում է անձնական շահագրգվածություն կառավարչի համար ինչքան հնարավոր է շուտ ստեղծել հնարավորություն պահանջների բավարման համար,որը և կբերի նաև իր վարձատրության հաշվարկմանը և ստացմանը,այսինքն եթե պարտատիրոջ ներկայացուցիչը,կամ փաստաբանը կամ կառավարիչը պարզաբանեին այս բոլորը պարտատիրոջը,շատ հնարավոր էր,որ սույն բողոքը չէր մտահաղացվի և չէր իրագործվի:

Հանձնաժողովի նախագահն հարց ուղղեց պարտատիրոջը թե արդյոք իր կողմից կառավարչի գործողություններում,վարվելակերպում նկատվել է կոպտություն և անհարգալից վերաբերմունք իր կամ իր ներկայացուցչի հանդեպ:

Դիմումատուն պատասխանեց,որ անհարգալից վերաբերմունք կամ կոպտություն սնանկության գործով կառավարչի կողմից չի նկատվել,բայց իրենց հարցերին կառավարիչը ամբողջական և սպառիչ պատասխաններ չի տալիս:

Հանձնաժողովի նախագահն հարց ուղղեց,սնանկության գործերով կառավարչ՝Կ.Ախոյանին, թե ինչու սպառիչ պատասխաններ չի տրվում պարտատիրոջ հարցերին:

Սնանկության գործով կառավարիչ՝Կ.Ախոյանը պատասխանեց հարցին,որ պարտատիրոջ հարցերը հիմնականում ուղղորդված են իր ներկայացուցիչ՝փաստաբանի կողմից,ով այդ հարցերի պատասխանները գիտի իր կողմից ստացված գրություններից և ծանուցումներից,բայց ուղղորդում է իր վստահորդին այն ուղղությամբ,որ կառավարիչը չի աշատում,ինչ-ինչ պատճառներով ձգձգումում է վարույթը,դրանով կարևորելով իր ներկայությունը և իր անհրաժեշտությունը,իսկ ինչ վերաբերվում են սպառիչ պատասխաններին,ապա դրանք վերաբերվում են դատական վարույթների ժամկետների և պրոցեդուրային հարցերին,որոնք ինչպես նշեցի նախորդիվ,կառավարչի կողմից վերահսկվող չեն և կառավարիչը չի որոշում դատական հիստը երբ հրավիրել,կամ դատական նիսը ինչու հետաձգել կամ այս կամ այն ապացույցը ընդունել կամ նոր ապացույց պահանջել,այդ բոլորը դատավարություն է և վերահսկվում է դատը վարող դատավորի կողմի ու բնական է որ դատավարությանը վերաբերվող հարցերին իմ կողմից սպառիչ պատասխաններ չի կարող տրվել,այլ կարող են կատարվել միայն ենթադրություններ,որը և պարտատիրոջ մոտ ստեղծում է տպավորություն,որ կառավարիչը չի իմանում կամ չի տիրապետում համապատասխան գիտելիքների,որը և հանգեցնում է ընթացակարգերի իրացման այս կարգավիճակին:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Ա.Աղամյանը հայտնեց այն կարծիքը,որ փաստական հանգամանքների ուսումնասիրությունից և կողմիրի բացատրությունների լսումից պարցվում է,որ դիմում նշված բոլոր հանգամանքներում սնանկության գործով կառավարիչը մեղք չունի,որ կառավարիչը կատարել է իր լիազորությունները ամբողջական և ժամկետներում և այժմ էլ մասնակցում է դատավարական պռոցեսներին,միայն պարտատերերի պահանջների բավարարման նպատակով:

Հանձնաժողովի անդամները փոխանակվեցին կարծիքներով և համաձայնեցին այն կարծիքի(որ բողոքում նշված հանգամանքները և պարտատիրոջ ներկայացրած հանգամանքները չեն հաստատվում փաստական հանգամանքների ուսումնասիրության և կառավարչի կողմից ներկայացրած բացատրություններից հետո այսինքն չկա սնանկության գործով կառավարչի մեղավորությունը ըստ էության սնանկության գործով կառավարիչ՝Կ.Ախոյանը,տվյալ սնանկության վարույթում կատարել է օրենքով սահմանված իր պարտականությունները և չի

թերացել դրանց կատարման մեջ ու բերված բողոքը ավելի շատ իր մեջ պարունակում է պարտատիրոջ ներքին անհանգստությունը,անհամբերությունը և որպես արդյունք դժգոհությունը /որը ուղղորդվում է ներկայացուցչի կողմից/իր պահանջների բավարման ժամկետների ուշացման և կրած վնասների համար,որոնց իրագործումը իրականացվելով անմիջապես սնանկության գործով կառավարչի կողմից/նրա դեմքով/ դժգոհության սլաքը ուղղվում է դեպի կառավարիչը չփաստարված հայտարարությունների տեսքով,որոնք հերքվում են կատրված աշխատանքի և փաստական հանգամանքների ուսումնասիրումից հետո:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – Քաղաքացի Կարինե Հարությունի Նազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ախոյանի նկատմամբ՝քաղաքացի Վարուժան Մարգարյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 26.05.2017թ-ին ստացված թիվ Մ35 դիմում-բողոքում առծածված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչ՝Կ.Ախոյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագի- տական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ, հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան